

ՊՈՒՇԿԻՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

(Ծննդյան 175-ամյակի առթիվ)

Ղ. Վ. ԱՅՎԱԶՅԱՆ

Ա. Մ. Պուշկինի կենսագրության նշանակալի դեպքերից մեկը նրա ուղե-վորությունն է Կովկաս 1829 թ., և այցելությունը Հայաստան՝ նույն տարվա հունիս-հուլիս ամիսներին, ռուս-թուրքական պատերազմի օրերին։ Այդ մասին նա պատմում է իր «Ճանապարհորդություն դեպի Արդրում» երկում, որ դրեց 1836 թ. ճանապարհորդության ընթացքում կատարած նոթագրումների հիման վրա։

Նիկոլայ I-ի արգելքին հակառակ Պուշկինը մեկնեց ռուսական գործող բանակ. այդ ուղևորության պատճառներն էին Անդրկովկաս աքսորված դեկաբրիստ բարեկամների հետ հանդիպելու ցանկությունը և այն հետաքրքրությունը, որ նա ուներ հենց նոր ավարտված ռուս-պարսկական պատերազմի (1826—1828), ինչպես նաև ռուս-թուրքական պատերազմի (1828—1829) իրադարձությունների նկատմամբ։

Առաջին տեղեկությունները Հայաստանի մասին Պուշկինն ստացել է լիցեյում ուսանելու տարիներին։ Կարդալով Կարամզինի «Ռուս ճանապարհորդի նամակները» և «Ռուսական պետության պատմությունը», ուսումնասիրելով Կիև-պեչորյան հայսմավուրքը, հին ռուսական տարեգրությունները և Ռուսաստանի պատմության վերաբերյալ այլ գրքեր, Պուշկինը հանդիպում էր հիշատակությունների Հայաստանի և հայ ժողովրդի անցյալի մասին։ Կարելի է ենթադրել, որ Պուշկինի ուշադրությունից չի վրիպել ևս մեկ դիրք՝ Հարություն Արարատյանի ինքնակենսագրական երկը¹, որը շարժեց գրաքննադատության հետաքրքրությունը։ Այս գրքում, ռուս գրականության մեջ առաջին անգամ, իր արտացոլումը գտավ Հայաստանի թեման։

Դեռևս լիցեյական տարիներին Պուշկինը ծանոթանում և մտերմանում է Պետերբուրգի հայ-վրացական գաղութի մի շարք ներկայացուցիչների հետ։ Նապոլեոնի դեմ արտասահմանյան արշավանքից վերադառնալուց հետո Ցախկոյե Սելոյում տեղավորված գվարդիական գնդի հուսարների շրջանում Պուշկինն ուներ մտերիմ բարեկամներ՝ Ն. Ռաևսկին, Պ. Չաադաևը, Պ. Կավերինը և ուրիշներ։ Այդ նույն գնդում էին ծառայում նաև հայազգի կազարե եղբայրները և Դավիթ Աբամելեքը։ Արդեն լիցեյն ավարտելուց հետո Պուշկինը, ինչպես երևում է, այցելել է վերջինիս տունը. այդ մասին բանաստեղծը հիշատակում է Ա. Դ. Աբամելեքին² նվիրված տողերում։

¹ «Жизнь Артемия Араратского, уроженца селения Вагаршапат, близ горы Арарат», тт. I—II, СПб., 1813.

² Իշխանուհի Աննա Աբամելեքը ծնվել է 1814 թ., 1835 թ. նա ամուսնանում է Ն. Ա. Բարատինսկու եղբոր՝ Իրակլի Աբրամովիչ Բարատինսկու հետ։ Աննա Աբամելեքին բանաստեղծու-

Когда-то (помню с умилением)
Я смел вас нянчить с восхищением,
Вы были дивное дитя,
Вы расцвели — с благоговеньем
Вам ныне поклоняюсь я.
За вами сердцем и глазами
С невольным трепетом ношусь
И вашей славою, и вами,
Как нянька старая, горжусь.

Դ. Աբամելեքի³ հետ ունեցած բարեկամության և լազարենների հետ ծանոթության շնորհիվ Պուշկինը պետք է որ տեղյակ լիներ 1812—1814 թթ. հայրենական պատերազմում հայ ժողովրդի զավակների գործած սխրանքներին։ Դա առավել հավանական է թվում այն պատճառով, որ բացի այնպիսի հայտնի հայերից, ինչպիսիք էին հայրենական պատերազմի հերոսներ գենեբալ Մադաթովը, Դելյանովը, Մելիքովը և ուրիշներ, իրենք՝ Աբամելեքները և լազարենները աչքի էին ընկել պատերազմում, և գենեբալ Ի. Ս. Աբամելեքը պարգևատրվել էր բազմաթիվ շքանշաններով։ Հայտնի է, որ երիտասարդ Պուշկինը մեծ հետաքրքրություն էր ցուցաբերում պատերազմի իրադարձությունների նկատմամբ։ Նա ոգևորվում էր նապոլեոնին հաղթողների փառքով ու հերոսությանը և խիստ ցավում, որ նրանց մարտական սխրանքների մասնակիցը չէ։

Եթե լիցենյում և Պետերբուրգում Պուշկինի ծանոթ հայերի շրջանակը բաղկացած էր հիմնականում զինվորականներից, ապա բանաստեղծի հարավային աքսորի տարիներին այդ շրջանակը զգալիորեն փոխվում է։ Պուշկինը բարեկամական հարաբերությունների մեջ էր պետական պաշտոնյա Արտեմի Խուդաբաշյանի հետ, հետաքրքրվում էր հայ արհեստավորների, առևտրականների, պանդոկապանների և այլոց կյանքով ու կենցաղով։

Քիշինևյան աքսորի ժամանակաշրջանին է վերաբերում Պուշկինի՝ մատիտով արված մի նկարը (թվագրվում է 1821 թ.), որի վրա թանաքով, բանաստեղծի ձեռքով նշված է. «12 ապր[իլի] (զատիկի 3-րդ օրը)»⁴։ Նկարը բարդ կոմպոզիցիա է, պատկերում է մի խումբ հայերի և մոլդավացիների՝ եկեղեցում։

Նույն շրջանում է գրված նաև «Քրիստոս հարյավ, իմ Ռեբեկա» բանաստեղծությունը, որը Բ. Վ. Տոմաշևսկին կապում է «Գավրիիլիադայի» հետ։ Մովսիսյան գրականագիտության մեջ այն կարծիքն է հայտնվել, թե «Գավրիիլիադայի» սյուժեն Պուշկինին կարող էր հուշած լինել հայկական մի ավանդակի, հավանաբար լսված հայերի հետ ունեցած զրույցների ժամանակ։ Ինքը բանաստեղծը «Գավրիիլիադայում» գրում է.

թյուններ են ձոնել Ի. Ի. Կոզլովը, Պ. Ա. Վյազմսկին, Ի. Պ. Մյատլեր, Ա. Դ. Աբամելեքը հայտնի էր որպես թարգմանչուհի։ Նա ուսանելից ֆրանսերենի է թարգմանել Պուշկինի, Կոզլովի, Լերմոնտովի, Նեկրասովի և ուրիշների գործերը (տե՛ս Ю. Н. Верховский, Е. А. Боратынский. Материалы к его биографии, Пг., 1916)։

³ Նրա ընտանիքը հիշատակվում է լիցենյի այցելուների ցուցակում (1815 թ. հունիսի 11)։

⁴ «Рукою Пушкина», изд. «Academia», 1935, էջ 394։

Но говорит армянское преданье.

Պուշկինի թղթերում պահպանվել է այսպիսի մի գրառում. «18 հուլիսի, 1821, նապոլեոնի մահվան լուրը, պարահանդես հայ արքեպիսկոպոսի մոտ 1821»⁵: Գաբրիել Այվազովսկու վկայության համաձայն Պուշկինի հիշատակած արքեպիսկոպոսը Գրիգոր Զախարյանովն էր⁶: Տեղեկություններ կան այն մասին, որ Պուշկինը հաճախ էր լինում հայ Ակոպովների բնտանիքում:

Ինչպես իրավացիորեն նկատում է Ի. Ենիկոլոփյանը «Պուշկինը Հայաստանում»՝ խորագրով իր հոդվածում, կցկտուր տեղեկություններից և անուղղակի տվյալներից երևում է, որ 1820-ական թթ. Պուշկինին ամենից շատ ձգում էին Կովկասի հարավային սահմանները, այսինքն Արևելյան Հայաստանը, քանի որ այդ տարիներին Ռուսաստանի առաջնահերթ խնդիրն էր նրևանի և Նախիջևանի խանությունների գրավումն ու միացումը: Բնական է, որ ռազմական արշավի ամենագործուն մասնակիցներից մեկի՝ գեներալ Ռաևսկու հետ ունեցած զրույցներից Պուշկինը կարող էր շատ բան իմանալ Կովկասի և նրա ժողովուրդների մասին:

Ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմները, ռուսական բանակի փայլուն հաղթանակները, Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին, դեկաբրիստների աքսորը գործող բանակ՝ «արյամբ ներումն հայցելու» պայմանով, նրանց եռանդուն մասնակցությունը պատերազմական գործողություններին՝ այս ամենը էլ ավելի ուժեղացրեցին ռուսական հասարակության մեջ արդեն իսկ գոյություն ունեցող հետաքրքրությունը դեպի Անդրկովկասը, այդ թվում նաև Հայաստանը:

Այդ տարիների ռուսական մամուլում տպագրվում են մի շարք հոդվածներ Հայաստանի մասին: Այսպես, «Вестник Европы» ամսագրում (որին Պուշկինը հետևում էր սկսած լիցելում սովորելու տարիներից) 1823 թ. նոյեմբերին լույս է տեսնում «Հայոց լեզուն ուսումնասիրելու դրդապատճառները» վերնագրով մի հոդված, իսկ 1824 թ.՝ Դավիթ Արղանովի «Դիտողություններ Հայաստանի և հայերի մասին» ոչ մեծ հոդվածը: Պուշկինին ժամանակակից պարբերական մամուլում լայնորեն լուսաբանվում են պատերազմական բոլոր իրադարձությունները: Այս ամենից բացի հրատարակվում էին ռուս և օտար ճանապարհորդների առանձին գրքեր Անդրկովկասի և Հայաստանի մասին, Հայաստանին նվիրված պատմական ակնարկներ: Դեռևս 1786 թ. Վահանովը ռուսերեն էր թարգմանել Հնդկաստանում Շահամիրյանի հրատարակած գիրքը⁸: 1809 թ. թարգմանվում է Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը», 1816 թ. Ալ. Խուդաբաշյանը (Արտեմի Խուդաբաշյանի եղբայրը) ֆրանսերենից ռուսերեն է թարգմանում Շահան-Ջրպետյանի գիրքը⁹: 1826—1829 թթ. հրատարակվում են նաև մի շարք գրքեր¹⁰:

⁵ Նույն տեղում, էջ 292:

⁶ «Записки Одесского общества истории и древностей», IX. էջ 163:

⁷ «Դրականություն և արվեստ», 1949, № 6:

⁸ «Краткое описание царства Армянского», СПб., 1786.

⁹ «Любопытные извлечения из древней истории Азии», СПб., 1816.

¹⁰ Տե՛ս, օրինակ. Я. и Д. Арзаноу, Опыт начертания истории царства Армянского, М., 1826; Вальш, Путешествие по Турции, СПб., 1829; Н. Н., Записки во время поездки из Астрахани на Кавказ и Грузию, М., 1829; И. Дебу, О кавказской линии и о соседственных горских народах, СПб., 1829.

Ռուսական գրականության մեջ երևան են գալիս Հայաստանին նվիրված մի շարք ստեղծագործություններ: Ինչպես արդեն ասացինք, 1813 թ. Պետերբուրգում լույս է տեսնում «Հարություն Արարատյանի կյանքը»: Պուշկինի մտերիմ բարեկամ Ֆյոդոր Գլինկայի եղբայրը՝ Սերգեյ Գլինկան, լույս է ընծայում մի պիոբ¹¹, որը պարունակում էր երկու չափածո գործ: Առաջինը «Հայկ և Բել» հին հայկական առասպելի մշակումն էր: Իր ծանոթագրություններում Ս. Գլինկան ընդգծում է հայ ժողովրդի ազատասիրությունը և նրա նվիրվածությունը ռուս ժողովրդին: Ս. Գլինկայի երկրորդ պոեմը՝ «Արդաստ կամ Ադոաս, Հայաստանի և հայրենիքի փրկիչը», պատմում է երկիրը ավերող և թալանող Նեոպտոլեմոսի դեմ հայերի մղած պայքարի մասին: Ս. Գլինկայի գրչին են պատկանում նաև պատմա-գիտական աշխատություններ¹² նվիրված Հայաստանին: Զի կարելի չհիշատակել Պուշկինի ժամանակակից Ա. Ֆ. Մերգլյակովի ստեղծագործությունները Հայաստանի մասին, Դենիս Դավիդովի բանաստեղծություններն ու նոթերը և, վերջապես, Ա. Ս. Գրիբոյեդովի ուղեգրությունները, «Հռոդամիստ և Զենոբիա» ողբերգության նրա կազմած պլանը, որի թեման վերցված է Հայաստանի և Վրաստանի մ. թ. I դարի պատմությունից: Անդրկովկասի բնությունը, մարդիկ, նրա ժողովուրդների կենցաղն ու բարքերը իրենց արտացոլումն են գտել դեկաբրիստ բանաստեղծներ Վ. Կյուխելբեկերի, Բեստուժև-Մառլինսկու, Ա. Օդոևսկու ստեղծագործության մեջ:

Ռուսական հասարակության մեծ հետաքրքրությունը դեպի Անդրկովկասն ու Հայաստանը պատմականորեն պայմանավորված և օրինաչափ էր: Մենք համարձակորեն կարող ենք ենթադրել, որ հայրենական գրականության բացառիկ ուղադրությամբ հետևող Պուշկինը չէր կարող անցնել բոլոր այս փաստերի կողքով: Բացի այդ, կան նաև անհերքելի վկայություններ այն մասին, որ Պուշկինը հիմնավորապես ուսումնասիրում էր Անդրկովկասի և մասնավորապես Հայաստանի մասին եղած ժամանակակից գրականությունը: Բանաստեղծի գրադարանում կար Ս. Բրոնեվսկու դիրքը՝ նվիրված Կովկասի աշխարհագրությանն ու պատմությանը¹³: «Ճանապարհորդություն դեպի Արդորում» երկում, էրզրումի նկարագրելիս Պուշկինը վկայակոչում է նշանավոր բուսաբան և ճանապարհորդ Տուրնֆորին, մեջբերումներ անելով նրա «Relation d'un voyage du Levant» (Ամստերդամ, 1718) աշխատությունից, ինչպես նաև Մորիեի «The Adventures of Hadji Baba of Ispahan» ձեպից (1824), որը հետագայում Սենկովսկին թարգմանեց ռուսերեն: «Կոմս Ի. Պոտոցկու ճանապարհորդությունից» Պուշկինը վերցրել է «Պլինիոսի վկայությունը» Դարյալի և Կովկասյան դռների մասին, օգտագործել է (առանց անունը հիշատակելու) «Կավալեր Գամբայի ճանապարհորդությունը Կովկասյան մարզ» դիրքը, Հայաստանի բնությունը նկարագրելիս հիշում է Հորացիոսի՝

¹¹ См. «Две повести в стихах, почерпнутые из древних армянских летописей», М., 1831.

¹² «Обозрение истории армянского народа», ч. I, М., 1832, ч. II, М., 1833.

¹³ С. Броневский. Новейшие географические и исторические известия о Кавказе, М., 1823.

«Վալդիոսին» ներբողը. «Եվ Հայաստանի ափերը, ի՞մ բարեկամ Վալդիոս, ոչ բոլոր ամիսներին են կաշկանդված անշարժ սառույցով»¹⁴։

Նախքան Կովկաս մեկնելը Պուշկինը շատ բան կարող էր իմանալ պատերազմական գործողությունների թատերաբեմից և ընդհանրապես Անդրկովկասից ժամանած իր բարեկամներից, մասնավորապես՝ Դ. Դավիդովից, որի հետ քանիցս հանդիպել է Հայաստանից նրա վերադառնալուց հետո¹⁵։

II

1829 թ. մայիսի 1-ին Պուշկինը դուրս է գալիս Մոսկվայից և մայիսի 26-ին հասնում Քիֆլիս։ Այստեղ նա մնում է մոտ երկու շաբաթ, ծանոթանում է վրաց բանաստեղծներ Ալեքսանդր Զավճավաձեի և Գրիգորի Օրբելիանու հետ։ Քաղաքից դուրս, Կուրի ափին գտնվող խաղողի այգում ի պատիվ Պուշկինի կազմակերպվում է մեծ տոնախմբություն՝ երաժշտությամբ, երգ ու պարով, որտեղ ներկա էին այն ժամանակ Վրաստանում ապրող ասիական բոլոր ժողովուրդների երգողներ, պարողներ, աշուղներ¹⁶։ Այս վկայությունից դատելով, ինչպես նաև հաշվի առնելով, որ Քիֆլիսում ապրող հայ հասարակական և մշակութային գործիչները սիրտ կապերի մեջ էին վրաց գործիչների հետ, կարելի է ենթադրել, որ Պուշկինի պատվին կազմակերպված տոնախմբության ժամանակ ոչ միայն կատարվել են նաև հայկական պարեր ու երգեր, այլև ներկա են եղել հայեր։ Ինչե՛ք, «Ճանապարհորդության...» մեջ Պուշկինը գրում է. «Քիֆլիսում ազգաբնակչության մեծ մասը կաղմում են հայերը. 1825 թվին նրանք այստեղ մինչև 2500 ընտանիք են եղել։ Այժմյան պատերազմների ժամանակ նրանց թիվն ավելի մեծացել է»¹⁷։

Ն. Ն. Ռաևսկու միջոցով Պուշկինը Հատուկ կովկասյան բանակի գլխավոր հրամանատար կոմս Պասկևիչից ռուսական գործող բանակն այցելելու թույլտվություն է ստանում և հունիսի 10-ին ուղևորվում Կարս։ Նա գնում էր ձիով, կազակների պահակակետերում ձիերը փոխելով։ Այդ պահակակետերից մեկում գիշերելուց հետո, հունիսի 11-ին Պուշկինը մտնում է Հայաստանի տերիտորիան. «Սկսեցի բարձրանալ Բզովդալը, այն սարը, որ Վրաստանը բաժանում է հին Հայաստանից։ Մառերով հովանավորված լայն ճանապարհը ոլորապտույտ անցնում է սարի մոտով։ Բզովդալի դագաթին սնցա մի փոքր կիրճով, որը կարծեմ, Գայլի դուռ է կոչվում և արդեն գտնվում է Վրաստանի բնական սահմանի մոտ։ Իմ առաջ բացվեցին նոր տեսարաններ, նոր հորիզոն. ոտներիս տակ փռված էին բուսավետ, կանաչ արտեր։ Ես մի անգամ էլ նայեցի արևից խանձված Վրաստանին և սարի թեթև զառիվայր լանջով սկսեցի իջնել Հայաստանի թարմ դաշտավայրը։ Աննկարագրելի հաճությամբ նկատեցի, որ տոթը հանկարծ մեղմացավ. կլիման արդեն ուրիշ էր»¹⁸։

14 Ա. Ս. Պուշկին, Երկեր (Հինգ հատորով), հատ. 5, Երևան, 1960, էջ 41։

15 Հայաստանում Դ. Դավիդովի գիշերական և օրվանագիտական գործունեության մասին տե՛ս Մ. Ներսիսյանի «Новые материалы о пребывании Дениса Давыдова в Армении» հոդվածը «Из истории русско-армянских отношений» (кн. вторая, Ереван, 1961) գրքում։

16 Տե՛ս Л. Гроссман, Пушкин, М., 1939, էջ 438։

17 Ա. Ս. Պուշկին, Երկեր, հատ. 5, էջ 29—30։

18 Նույն տեղում, էջ 31—32։

Ավելի քան վեց ժամ Պուշկինը գնում էր մենակ, չհանդիպելով ոչ մի անցորդի։ Վերջապես «մի կողմում հյուղերի նմանվող քարակույտեր տեսա,— գրում է նա,— և մոտեցա նրանց։ Պարզվեց, որ հասել եմ մի հայկական գյուղ։ Մի քանի կին, հագներին խաչաբաժնի ցնցոտիներ, նստած էին գետնափոր խրճիթի տափակ կտրին։ Մի կերպ բացատրվեցի։ Նրանցից մեկն ի ջալ խրճիթը և ինձ համար սլանիր ու կաթ բերեց»¹⁹։

Դետր անցնելով Պուշկինը տեսնում է զույգ եղներ լծած մի սայլ, որ մի քանի վրացիների ուղեկցությամբ բարձրանում էր զառիթափ ճանապարհով։ «Որտեղի՞ց եք գալիս»,— հարցրի ես նրանց,— «Թեհրանից»։— «Ի՞նչ եք տանում»։— «Գրիբայեղին»։ Դա սպանված Գրիբոյեդովի մարմինն էր, որ փոխադրում էին Թիֆլիս»²⁰։

Հենց նույն «Ճանապարհորդություն դեպի Արդրում» երկում Պուշկինը շափազանց խոր և ճշմարտացի բնութագրում է Գրիբոյեդովին և նրա «Խելքից պատուհաս» կատակերգությունը։ Բանաստեղծը վերհիշում է իր վերջին հանդիպումը Գրիբոյեդովի հետ 1828 թ. դարնանը Պետերբուրգում, ուր վերջինս եկել էր Պարսկաստանից, բերելով Թուրքմենշայի հաշտության պայմանագրի տեքստը։ Գրիբոյեդովը պատմում էր Անդրկովկասից ստացած իր տպավորությունները. նա ոգևորված էր այդ երկրամասի վերակառուցման լայն հեռանկարներով։ Գրիբոյեդովի միջոցով Կովկասում ծառայության էին հրավիրվել Պուշկինի բարեկամներից ու ծանոթներից շատերը՝ Ն. Վսեվոլոժսկին, Ֆ. Խոմյակովը, Զ. Գրուբերը, Ի. Մալցևը, Ե. Զիլյաևը, Պ. Զավիլեյսկին և ուրիշներ։

Պուշկինը Գրիբոյեդովին ցանկացել է հանդիպել, րստ երևույթին նաև այն պատճառով, որ նա եղել էր բոլոր այն ճակատամարտերում, որոնց մասնակցել էր Պուշկինի եղբայրը և մասնավորապես Ջևանբուլաղի մարտում, որի համար ինքն Սերգեևիչը ստացել էր իր առաջին սպայական աստիճանը։

Պուշկինի համար, որն արդեն մեկ տարի էր, ինչ պատրաստվում էր մեկնել Հայաստան, Գրիբոյեդովը տեղեկությունների մի անգնահատելի աղբյուր էր, մի անձնավորություն, որը լավ գիտեր ոչ միայն Հայաստանի պատմությունը, այլև ներկա վիճակը, որն իր «Ուղեգրական նոթերում» տվել էր Հայաստանի բնության վառ նկարագրությունը և, որ ամենակարևորն է, լավատեղյակ էր Արևելքում և Կովկասյան բանակում տիրող իրադրությանը։ Պուշկինի և Գրիբոյեդովի հրաժեշտի նկարագրությունն էլ ցույց է տալիս, որ նրանց զրույցների թեման Արևելքում տեղի ունեցող իրադարձություններն էին. «Նա տխուր էր և տարօրինակ նախազգացումներ ուներ։ Սկսեցի նրան հանգստացնել։ Նա ինձ ասաց. „Vous ne connaissez pas ces gens-là, vous verrez, qu'il faudra jouer des couteaux“²¹։

Դյառգյառում Պուշկինը հանդիպում է գլխավոր շտաբի գործերի կառավարիչ, գեներալ Զերնիշովի ֆլիգել-ադյուտանտ Ն. Ա. Բուտուրլինին, որը, ըստ որոշ տվյալների, Կովկաս էր ուղարկվել աքսորյալ ղեկաբրիստների հետևելու համար և որի մատնությամբ էլ Ն. Ռաևսկու դեմ հատուկ գործ

19 Նույն տեղում, էջ 32։

20 Նույն տեղում։

21 «Ի՞նչ դեռ չգիտեք այդ մարդկանց, կտեսնեք, որ բանը կհասնի դաշույնների»։ Նույն տեղում։

հարուցվեց²²։ Բուստուրլինին Պուշկինի տված թուղթիկ դիմապատկերի մեջ զգացվող դառն հեգնանքի պատճառն, անշուշտ, այն նողկալի դերն է, որ նա խաղացել է բանաստեղծի բարեկամի կյանքում։

Ճանապարհին Պուշկինը հանդիպում է հայ քահանայի, որ Երևանից գրնում էր Ախալցխայի նրանց միջև տեղի է ունենում մի ուշագրավ երկխոսություն. «Ի՞նչ նորություն կա Երևանում»,— հարցրի ես նրանից։ — «Երևանում ժանտախտ է»,— պատասխանեց նա։ — «Իսկ ի՞նչ լուր Ախալցխայից»,— «Ախալցխայում ժանտախտ է»,— պատասխանեցի նրան։ Փոխանակելով սույն հաճելի լուրերը, մենք բաժանվեցինք»²³։

Շարունակելով ճանապարհը, Պուշկինն իջնում է Շիրակի հարթավայրը. «Առաջանում էի բերրի արտերի և ծաղկափթիթ մարգագետինների միջով։ Հունձը ծորում էր, սպասելով մանգաղի։ Ես հիանում էի այս սքանչելի հողով, որի բերրիությունը արևելքում առած էր դարձել։ Իրիկնադեմին հասա Պարնիքոյ։ Այստեղ կաղակների պոստ կար։ Ուրյադնիկը փոթորիկ էր գուշակում և ինձ խորհուրդ էր տալիս մնալ գիշերելու։ Բայց ես ուզում էի անպատճառ նույն օրը հասնել Գումրի»²⁴։ Ավելի քան երկու ժամ նա գնում է տեղատարափ անձրևի տակ և միայն կեսգիշերին հասնում Գումրի ու գիշերում կաղակների վրանում. «Այստեղ գտա տասներկու կաղակ՝ կողք-կողքի քնած։ Ինձ տեղ տվին, չոգնածությունից ինքս ինձ կորցրած ընկա յափուհյուս վրա։ Այդ օրը ես անցել էի 75 վերստ։ Քնեցի մեռածի պես»²⁵։

Առավոտյան արթնանալով և վրանից դուրս գալով, Պուշկինը տեսնում է «ձյունապատ» երկզվիսանի մի սար. «Այդ ի՞նչ սար է»,— հարցրի ճմլկոտելով և լսեցի պատասխանը. — «Պա Արարատն է»։ Որքան զորավոր է հրեշտունների ներգործությունը։ Ազահարար նայում էի բիրիական սարին, տեսնում էի տապանը, որ կանգ էր առել նրա զազաթին՝ նորոգման և կյանքի հույսով, և դուրս թռչող ազոավն ու աղավինն, պատժի և հաշտության սիմվոլներին...»²⁶։

Հունիսի 12-ի առավոտյան Պուշկինն ուղեկցողի հետ ճանապարհ է ընկնում դեպի Կարս։ «Ահա և Արիաշայը»,— ասաց ինձ կաղակը։ Արփաշայը, մեր սահմանը։ Դա արժեր Արարատին։ Ես սուրացի դեպի գետը մի անմեկնելի զգացմունքով։ Դեռ երբեք օտար երկիր չէի տեսել։ Սահմանն ինձ համար ինչ-որ խորհրդավոր բան էր։ Ինձ մանկության օրերից ճանապարհորդությունն իմ սիրած երազանքն է եղել։ Հետագայում ես երկար ժամանակ աստանդական կյանք եմ վարել, թափառելով մերթ հարավում, մերթ հյուսիսում, և դեռ երբեք անծայրածիր Ռուսաստանի սահմաններից դուրս չէի եկել։ Ես ուրախությամբ մտա նվիրական գետը և իմ լավ ձին ինձ դուրս հանեց թուրքական ավեր։ Սակայն այդ ամիս արդեն նվաճված էր, ևս դեռևս գտնվում էի Ռուսաստանում»²⁷։

22 Այդ մասին տե՛ս «Записки декабриста Порера», М., 1931, էջ 205։

23 Ա. Ս. Պուշկին, Երկեր, հատ. 5, էջ 34։

24 Նույն տեղում, էջ 34—35։

25 Նույն տեղում, էջ 35։

26 Նույն տեղում, էջ 35—36։

27 Նույն տեղում, էջ 36։

Ճանապարհին, Կարս շհասած, հայկական մի գյուղում ճաշի փոխարեն Պուշկինն ուտում է «չլուրեկը՝ բլիթանման, մոխրի հետ խառն թխած հայկական հացը», որը նրան այնքան էլ դուր չի գալիս: Ճանապարհին նրան է միանում մի երիտասարդ թուրք, «որ սարսափելի շատախոս էր»: Թեև Պուշկինը չէր հասկանում, թե ինչ է խոսում իր ուղեկիցը, բայց մոտավորապես ըմբռնում է, որ «նա մի թեթև հայհոյում էր ուսներին»: Ճանապարհին հանդիպած մի սպայից նա իմանում է, որ ուսական զորքն արդեն «Ղարսից առաջ է շարժվել: Չեմ կարող նկարագրել իմ հուսահատությունը. այն միտքը, թե ամայի Հայաստանում իզուր շարշարվելուց հետո, ստիպված պիտի լինեմ վերադառնալ Թիֆլիս, ուղղակի տանջում էր ինձ»²⁸:

Առաջ անցնելով, Պուշկինը հասնում է Կարսից 20 վերստի վրա գտնվող թուրքական մի գյուղ: Այստեղ ձին փոխելու համար մի փոքր անախորժություն է ունենում թուրք գյուղապետի հետ, բայց դրամ տալուց հետո ստանում է և՛ ձի, և՛ ուղեկցող: Շուտով հասնում է Կարսի դարպասին և լսում ուսական թմբուկի ձայնը, որ այգանվազ էր զարկում: Քաղաք մտնելով ուղեկցողին կարգադրում է իրեն անմիջապես բաղնիք տանել, բայց բաղնիքը փակ էր: «Անձրևը շոշափում էր փվում էր վրաս,— գրում է Պուշկինը:— Վերջապես մոտիկ տնից դուրս եկավ մի երիտասարդ հայ և, բանակցելով թուրքիս հետ, ինձ կանչեց իր մոտ, խոսելով բավական մաքուր ուսերեն: Նա ինձ նեղ սանդուղքով տարավ իր տան երկրորդ մասը: Ցածր բավկաթոռներով և հին զորզերով կահավորված սենյակում նստած էր մի պառավ կին, նրա մայրը: Կինը մոտեցավ ինձ և համբուրեց իմ ձեռքը: Որդին պատվիրեց նրան կրակ անել և ինձ համար ընթրիք պատրաստել: Ես հանվեցի ու նստեցի կրակի մոտ: Ներս մտավ տանտիրոջ փոքր եղբայրը, մոտ տասնյոթ տարեկան մի տղա: Երկու եղբայրն էլ եղել էին Թիֆլիս և այնտեղ ապրել մի քանի ամիս: Նրանք ինձ ասացին, որ մեր զորքերը առաջ են շարժվել նախընթաց օրը և որ մեր ճամբարը գտնվում է Ղարսից 25 վերստ հեռու: Ես միանգամայն հանգստացա: Շուտով պառավն ինձ համար սոխով ոշխարի միս պատրաստեց, որն ինձ թվաց խոհարարական արվեստի զագաթնակետը: Մենք բոլորս պառկեցինք միևնույն սենյակում: Ես պառկեցի մարվող բուխարու դիմաց և քնեցի...»²⁹:

Հայ ընտանիքի ջերմ հյուրընկալությունը, հայերի բարեկամական վերաբերմունքը ուսների հանդեպ Պուշկինը նկատել էր ամենուրեք՝ թե՛ ճանապարհին և թե՛ գյուղերում: Հայտնի է, որ Կարսի գրոհի ժամանակ քաղաքի հայ բնակչությունը մեծ օգնություն է ցույց տվել ուսական բանակին: Վ. Պոտտոն գրում է, որ գրոհի ժամանակ ամենուրեք «կրկնվում էր միևնույնը՝ հայերն օգնում էին ուսներին բարձրանալ բերդի պարիսպը»³⁰: Այդ մասին վկայում է նաև գեներալ Ուշակովը. «Կարսեցի հայերը... լիակատար հրճվանքով ընդունեցին մեր զինվորներին և իրենց հանդեպ բարի վերաբերմունքի համար երախտապարտ լինելով, կոմս Երևանսկու կարգադրությամբ կազմեցին հեծյալ և հետիոտն

²⁸ Նույն տեղում, էջ 37:

²⁹ Նույն տեղում, էջ 38:

³⁰ В. Потто, Кавказская война, т. IV, вып. I, Тифлис, 1887, էջ 63—64:

միլիցիա, որ հասնում էր մի քանի հարյուրի և սովորաբար ծառայում էր փաշալիքի սահմանապահ պահակակետերում»³¹։

Սևավոտյան հայ պատանու ուղեկցությամբ Պուշկինը գնում է դիտելու քաղաքը, անմատչելի ժալուի վրա կառուցված նրա ամրություններն ու միջնաբերդը. «... ես չէի հասկանում, թե մենք խնչպես ենք կարողացել Ղարսին տիրանալ, իմ հայր ինձ մի կերպ բացատրում էր ռազմական գործողությունները, որոնց ականատես էր եղել»³²։

Նկատելով տղայի «ձգտումը դեպի պատերազմը», Պուշկինն առաջարկում է նրան իր հետ գնալ ռուսական բանակը։ «Կես ժամ հետո մեկնեցի Ղարսից, և Արտեմը (այդպես էր կոչվում իմ հայը) արդեն արշավում էր կողքիս՝ թուրքական հովատակի վրա, քրդական ճկուն տեղը ձեռքին, դաշույնը գոտին խրած և զառանցելով թուրքերի ու ճակատամարտի մասին»³³։

Պուշկինը նշում է, որ պատերազմը ծանր հետքեր էր թողել՝ ցորենի արտերում ոչ ոք չկար, շրջակա գյուղերի բնակիչները փախել էին։ Բանաստեղծի ուշադիր հայացքը նկատում է, որ «ճանապարհը հիանալի էր և խրուտ սեղերը սալահատակած, առուների վրա շինված էին քարե կամուրջներ», մի հանգամանք, որ անշուշտ խոսում է այստեղ բնակվող հայերի կուլտուրայի մասին։ Երկու ժամից հետո, մի բլրակի վրայից, Պուշկինը տեսնում է ռուսական բանակի ճամբարը՝ տեղավորված Կարսչայի ափին, և մի քանի րոպե անց նա արդեն Ռաևսկու վրանում էր։

III

Պատերազմական գործողությունների նկարագրությունը «Ճանապարհորդության...» մեջ սկսվում է երրորդ գլխից։ Պուշկինը ռուսական ճամբար է ժամանում հունիսի 13-ին, այն օրը, երբ զորքը հրաման էր ստացել շարժվել դեպի էրզրում. «Ռաևսկու մոտ ճաշելիս ես լսում էի երիտասարդ զենեարայների դատողություններն իրենց առաջիկա շարժման մասին։ Գեներալ Բուրցովը ուղարկված էր դեպի ձախ՝ Արզրումի մեծ ճանապարհով, ուղղակի թուրքական ճամբարի դեմ, այնինչ մնացյալ բոլոր զորքը աջ կողմով պետք է անցներ թշնամու թիկունքը»³⁴։

Հողվածի բուն նյութից շեղվելով, ուշադրություն նվիրենք այն անձանց, ում հիշատակում է Պուշկինն իր ուղեգրության մեջ ու նկարագրում նրանց գործողությունները էրզրումի արշավանքի ընթացքում։

Ն. Ն. Ռաևսկին (կրտսերը) Պուշկինի վաղեմի բարեկամներից էր. այդ նրան էր նվիրել բանաստեղծն իր «Կովկասի գերին» և «Անդրե Շենյեն»։ Նա սերտ կապերի մեջ էր գեկաբերիստների հետ, ու թեև ցարական իշխանություններին չի հաջողվում հաստատել նրա պատկանելությունը զադտնի կազմակերպություններից որևէ մեկին, բայց և այնպես Ռաևսկուն փոխադրում են Հատուկ Կովկասյան կորպուսը, ուր Երմոլովը նրան նշանակում է Նիժեգորոդյան զրազունյան գնդի հրամանատար։ Իր գնդի հետ միասին նա ակտիվո-

31 Н. Ушаков, История военных действий в Азиатской Турции в 1828 и 1829 годах, ч. I, Варшава, 1843, էջ 76—77։

32 Ա. Ս. Պուշկին, Երկեր, հատ. 5, էջ 38։

33 Նույն տեղում, էջ 39։

34 Նույն տեղում։

րեն մասնակցել է ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմներին և աչքի ընկնելու համար 26 տարեկան հասակում արժանացել է գեներալի աստիճանի³⁵։

Ի. Գ. Բուրցովը 1817 թ. Բարորության միության անդամ էր։ Նրա հետ Պուշկինը ծանոթացել էր ղեռնա լիցեյում ուսանելու տաճիկներին։ Բուրցովը պատասխանատվության ենթարկվեց ղեկտեմբերի 14-ի գործի կապակցությամբ։ Պետրոպոլիովյան ամբոցում բանտարկվելուց հետո հեռացվում է գնդի հրամանատարի պաշտոնից և 1827 թ. տեղափոխվում Կովկաս։ Բուրցովը մասնակցել է ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմներին։ Մշտապես գտնվելով ամենավտանգավոր հատվածներում, իր գործողություններով նպաստում էր մարտի հաջող ելքին։ Էրզրումի արշավանքի ժամանակ հմուտ զորաշարժով և հունիսի 19-ի ճակատամարտի (որի ակաճատեսն էր Պուշկինը) ողջ ծանրությունն իր վրա վերցնելով, նա ռուսական բանակին հնարավորություն տվեց գրավել քաղաքը։ Այս արշավանքում հերոսի մահով ընկած ղեկաբերիստ Բուրցովին Գորիում հուշարձան է կանգնեցվում, որ աներևակայելի փաստ էր նիկոլայանյան ռեակցիայի տարիներին։

Սրանք էին այն առաջին ծանոթները, ում հանդիպեց բանաստեղծը գործող բանակ ժամանելու հենց առաջին օրը։ Հունիսի 13-ի գիշերը նրան ներկայացնում են Պասկևիչին և այստեղ «տեսա մեր Վոլխովսկուն», — գրում է Պուշկինը, — ոտից գլուխ փռոցոված, մորուքը բուսած, հոգսերից հյուծված. նա, սակայն, որպես հին ընկեր, ժամանակ գտավ ինձ հետ զրուցելու»³⁶։

1818 թ. Բարորության միության անդամ Վ. Դ. Վոլխովսկին Պուշկինի դասընկերներից էր, բազմիցս գովերգված նրա լիցեյան ոտանավորներում։ 1826 թ. Վոլխովսկուն տեղափոխում են Կովկաս։ Պարսկաստանի հետ պատերազմի ժամանակ նա կատարում էր կարևորագույն դիվանագիտական հանձնարարություններ։ Թուրքական արշավանքի ժամանակ նա բուխակում նշանակալի ազդեցություն ուներ իր ծառայությունների շնորհիվ։

Շտաբում Պուշկինը հանդիպում է դպրոցական տարիների իր մտերիմ բարեկամ, ղեկաբերիստ Ի. Ի. Պուշկինի եղբորը՝ Միխայիլ Պուշկինին։ Նա պաշտոնազուրկ էր արված և որպես շարքային աքսորված Կովկաս այն բանի համար, որ նախապատրաստվող ապստամբության մասին գիտենալով՝ կառավարությանը չէր հայտնել։ Մ. Պուշկինը ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմի ամենաեռանդուն մասնակիցներից էր։ Կարսի պաշարման ժամանակ տեղանքը հետախուզելիս նա այնպիսի խիզախություն է ցուցաբերում, որ Պասկևիչն ստիպված է լինում խոստովանել. «Ռուսները շատ բանով են պարտական Պուշկինի եռանդին, որը կարողացավ իր անունը դնել պարսկական և նրան հաջորդած թուրքական կամպանիաների ամենաակնառու գործիչների շարքում»։ Նրա մասին Պուշկինը գրում է. «Նա սիրված էր ու հարգված որպես հիանալի ընկեր և քաջ զինվոր»։ Ապա, այլևս նոր անուններ չհիշատակելով, նշում է. «Իմ հին բարեկամներից շատերը շրջապատեցին ինձ։ Ինչպե՞ս էին նրանք փոխվել, ինչպե՞ս արագ է անցնում ժամանակը»³⁷։

35 Ն. Ն. Ռանսկու և Անդրկովկաս արսորված ղեկաբերիստների մասին տե՛ս Մ. Գ. Ներսիսյանի «Դեկարրիստները Հայաստանում» հանգամանալից ուսումնասիրությունը «Из истории русско-армянских отношений» (кн. II) գրքում։

36 Ա. Ս. Պուշկին, Երկեր, հատ. 5, էջ 40։

37 Նույն տեղում։

Պուշկինը գիշերում է Ռաևսկու վրանում, իսկ առավոտյան զորքի հետ միասին շարժվում առաջ։ Բուրցովի ջոկատի խելացի գործողությունների շրջանորհիվ ռուսական զորքը բարեհաջող կերպով անցնում է վտանգավոր ձորը և կանդ առնում Սոդանուղի բարձունքում։ Շուտով հրացանաձգություն է սկսվում, և Պուշկինը Սեմիչևի հետ գնում է դիտելու իր համար «նոր այդ տեսարանը»։

Ն. Ն. Սեմիչևը 1812 թ. հայրենական պատերազմի հերոսներից էր, դեկաբրիստ։ Պետրոպոլովյան ամրոցում 6-ամսյա բանտարկությունից հետո կապիտանի սուտիճանով փոխադրվում է Նիժեգորոդյան զրազունյան հունդը և մասնակցում պարսկական ու թուրքական պատերազմներին, ճակատամարտերում աչքի ընկնելով իր խիզախությամբ։

Ճանապարհին Պուշկինն ու Սեմիչևը հանդիպում են մի վիրավոր կազակի, իսկ ձորն անցնելով՝ «դիմացի սարալանջին տեսանք մոտ երկու հարյուր կազակ... իսկ նրանցից վերև՝ մոտ հինգ հարյուր թուրք։ Կազակները դանդաղորեն ետ էին քաշվում։ Թուրքերը վրա էին տալիս մեծ հանդգնությամբ, նշան էին բռնում քսան քայլից և կրակելով ևտարշավում»³⁸։ Շուտով հասնում է օգնական զորամասը, և թուրքերն այդ նրկատելով իսկույն նահանջում են, «սարի վրա թողնելով կազակի գլխատված ու անդամահատված մերկ դիակը»։

«Ճանապարհորդության...» մեջ հեղինակը ոչինչ չի ասում հունիսի 14-ի հրացանաձգությանն իր մասնակցության մասին, սակայն հայտնի է. որ Պուշկինը չի մնում լուկ դիտողի դերում, այլ խառնվում է կազակների շղթային և վիրավոր կազակի ձեռքից տեղը վերցնելով խոչանում թուրքերի վրա։ Սեմիչևը, որին Ռաևսկին հանձնարարել էր հսկել բանաստեղծին՝ նրա տաքարյուն խառնվածքին ծանոթ լինելով, դժվարությամբ է կարողանում նրան դուրս բերել ձեռնամարտից։ Զինվորները շատ էին զարմանում, իրենց առաջ տեսնելով կլոր գլխարկով և քաղաքացիական հագուստի վրայից յափնջի զրցած անծանոթ հերոսին։

Ռազմական գործողություններին Պուշկինի ունեցած մասնակցության մասին լիկայություններ կան Ն. Ուշակովի մոտ³⁹ և Մ. Պուշկինի «Նոթերում»։ Պահպանվել է բանաստեղծի ձեռքով Ե. Ն. Ուշակովայի արժամում արված նկարը, որտեղ նա պատկերել է իրեն նժույգի վրա, տեղը ձեռքին, կլոր գլխարկով ու յափնջիով։

Ճամբար վերադառնալով Պուշկինը տեսնում է վիրավոր ռուս զինվորների, իսկ երեկոյան այցելում է «երիտասարդ Օստեն-Սակենին, որը վիրավորվել էր նույն օրը՝ ուրիշ ճակատամարտում»։ Խոսքը, հավանաբար, Կովկասյան կորպուսի շտաբի հրամանատար, իր աղատամտությամբ հայտնի Գ. Ե. Օստեն-Սակենի որդու մասին է։

Գիշերը և հունիսի 17-ի օրը բանաստեղծն անց է կացնում Ռաևսկու հետ, որի վրանում «հավաքվում էին մուսուլմանական գնդերի բնկերը, և զրույցը տեղի էր ունենում թարգմանի միջոցով։ Մեր զորքի մեջ կային թեմեր անդրկովկասյան մարզերի ժողովուրդներ և թե՛ նոր նվաճված երկրների

³⁸ Նույն տեղում, էջ 41։

³⁹ Տե՛ս Н. Ушаков, նշվ. աշխ., էջ 305—306։

բնակիչներ»⁴⁰։ Հայտնի է, որ երկու ռազմական կամպանիաներին էլ մասնակցել են տեղական բնակչությունից կազմված ջոկատներ, որոնք կոչվում էին պարսկական և թուրքական զավթիչների դեմ։ Այսպես, հայերից կազմվել էր երեք կամավորական ջոկատ, ըստ որում դրանցից առաջինի մարտիկների թիվը հասնում էր հազարի։ Դրանց դերն առավել նշանակալից էր դառնում այն պատճառով, որ ռուսական բանակը Կովկասում միշտ մարդկանց պակաս էր զգում։

Բազմաթիվ փաստեր կան այն մասին, որ ռազմական գործողություններին իրենց ունեցած մասնակցությունը կամավորական ջոկատները էական օգնություն են ցույց տվել ռուսական բանակին։ Ժամանակին այդ մասին գրվել է Պետերբուրգի, Մոսկվայի և Թիֆլիսի թերթերում, Կովկասյան պատերազմների պատմությանը նվիրված գրքերում։ Տեղացիներից շատերը՝ հայեր, վրացիներ, ադրբեջանցիներ, հերոսության համար պարգևատրվել էին շքանշաններով։ Նրանց անուններն ու սխրագործությունները հայտնի էին հառնում ռուս ընթերցողների լայն շրջանում (բոլոր պարգևատրումների մասին հաղորդագրություն էր տպվում «Русский инвалид»-ում)։ Այսպես, Ն. Ուշակովը գրում է, որ կարսեցի հայերը տվել էին 1500 հեծյալ և հետևակ, որ նրանց «հեծյալ պարեկը ամսի 16-ին հայտնաբերում է Օսման-փաշայի առաջապահ ջոկատը»⁴¹ և դա ռուսական զորքին հնարավորություն է տալիս ջախջախել թուրքերին։ Ի. Կ. Ենիկոլոփյանը գրում է, որ գործող բանակում Պուշկինի գտնված ժամանակ ռազմական գործողություններին մասնակցում էր հայկական զորամաս՝ Նախիջևանյան սարբազյան բաժնակում⁴²։

Հունիսի 18-ին ռուսական բանակը տեղափոխվում է ուրիշ տեղ, իսկ հունիսի 19-ին տեղի է ունենում թուրքական կամպանիայի ամենավճռական մարտերից մեկը, որի ընթացքում ջախջախվում է 30-հազարանոց թուրքական բանակը։ Իսկ ովքե՞ր էին այդ ճակատամարտի զլխավոր հերոսները ըստ Պուշկինի նկարագրության. «Թուրքերը շրջանցում էին մեր զորքը, որը նրանցից բաժանված էր խոր ձորակով։ Կոմսը Պուշկինին ուղարկեց ձորակը դիտելու. Պուշկինը արշավեց։ Թուրքերը նրան ձիավորի տեղ դրին և նրա վրա համազարկ տվին»⁴³։ Ձախ թևը, որտեղ «տաք կռիվ էր տեղի ունենում», զլխավորում էր Բուրցովը։ Կենտրոնում կանգնած էր Ռաևսկին։ «Մեր առջևը (կենտրոնի դիմաց) արշավում էր թուրքական հեծելազորը։ Կոմսը նրա դեմ ուղարկեց զեներալ Ռաևսկուն, որը գրոհի տարավ նիժեգորոդյան գունդը. թուրքերը անհետացան։ Մեր թաթառները շրջապատում էին նրանց վիրավորներին և արագորեն հանում նրանց շորերը՝ մերկ թողնելով դաշտի մեջ։ Գնեներալ Ռաևսկին կանգ առավ ձորակի եզրին։ Երկու էսկադրոն, բաժանվելով զնդից, տարվել էին իրենց հետադարձ ուղով. նրանց փրկեց զնդապետ Սիմոնիչը»⁴⁴։

Ժամը վեցին մոտ Պասկևիչը հրամայում է նորից գրոհել։ Հեծելազորը, որին զլխավորում էր Ռաևսկին, գտնվում էր առջևում։ Պուշկինը գրում է.

⁴⁰ Նույն տեղում, էջ 92։

⁴¹ Նույն տեղում։

⁴² Ի. Ենիկոլոփյան, Պուշկինը Հայաստանում։

⁴³ Ա. Ս. Պուշկին, Երկեր, հատ. 5, էջ 44։

⁴⁴ Նույն տեղում։

«Ամեն ընտանիքում ձին կարող էր ընկնել, և այն ժամանակ ամբողջ ուլանական ղուկը կանցներ իմ վրայով»։ Սակայն «Ճանապարհորդություն...» թե՛ մար-րադիր օրինակում, թե՛ «Սովրեմեննիկում» տպված տեքստում դեկտեմբերյան ապստամբությանը մասնակցած զորամասերից բաղկացած Հավաքական ուլա-նական զինգի անվան հիշատակությունն անգամ, զրաբնական նկատառումնե-րով, փոխարինված էր աստղանիշով։

Հավանաբար այս նույն օրվանն են վերաբերում դեկաբրիստ Ա. Ս. Գան-դբուլովի հիշողությունները ճակատամարտին Պուշկինի ունեցած մասնակ-ցության մասին։ Նա գրում է. «Մենք, պիոներներս, մնացել էինք շտաբի պաշտպանական զորամասում և գտնվում էինք մի բարձունքի վրա, որտե-ղից Պասկևիչը, նժույգի վրայից չիջնելով, դիտում էր ճակատամարտի ըն-թացքը։ Նրբ թուրքերի հիմնական մասը ետ մղվեց, և Ռաևսկին իր հեծե-լազորով սկսեց հետապնդել նրանց, մենք տեսանք արագորեն դեպի մեզ սլացող մի հեծյալի. դա Պուշկինն էր, կարճ բաճկոնով, փոքրիկ ցիլինդրով։ Պասկևիչից երկու-երեք քայլի վրա ձիուն կանգնեցնելով, նա գլխարկը հա-նեց, Ռաևսկու հանձնարարությամբ մի քանի բառ հաղորդեց և, սլատասխանն ստանալով, կրկին սլացավ Ռաևսկու մոտ։ Ջոկատում եղած ժամանակ Պուշ-կինն իրեն լուրջ էր պահում, խուսափում էր նոր հանդիպումներից, կապ էր պահպանում միայն հին ծանոթների հետ, իսկ կողմնակի մարդկանց ներ-կայությամբ լուռ էր, կարծես մտախոհ»⁴⁵։

Բանաստեղծը մի քանի անգամ նշում է դեներալ Ն. Ն. Մուրավյովի հը-մուտ գործողությունները. Մուրավյովը «կասկածելի» անցյալ ուներ՝ մինչև Կովկաս մեկնելը (1816 թ.) նա կապ ուներ օպոզիցիոն սպայության հետ և «Սրբազան արտելի» անդամ էր։

Հունիսի 20-ին ճակատամարտ տեղի ունեցավ Հակի-փաշայի զորքի հետ։ «Ես գնացի Նիժեգորոդյան զինգի հետևից, բայց իմ ձին կաղում էր։ Հետ մնացի։ Իմ մոտով անցավ ուլանական ղուկը։ Հետո Վոլխովսկին սուրաց երեք թնդանոթներով։ ...Հանդիպեցի գեներալ Մուրավյովին մի հետևակ զինգի հետ միասին։ Նա մի վաշտ ուղարկեց անտառը՝ այն մաքրելու թշնամիներ-րից»⁴⁶։ Այս ճակատամարտի հերոսներն էին դարձյալ նույն Հավաքական ուլանական ղուկը, Նիժեգորոդյան ղուկը, ինչպես և զորահրամանատար-ներ Վոլխովսկին, Ռաևսկին, Մուրավյովը։

Հաջորդ վեց օրվա ընթացքում՝ մինչև հունիսի 26-ը, ռուսական բանակը նախապատրաստվում էր էրզրումի դրամանը, այդ օրերը Պուշկինն անցկաց-րեց Ռաևսկու և իր բարեկամների շրջանում։ Մենք տեղեկություններ չունենք թե ինչի մասին էր խոսում բանաստեղծն իր բարեկամների հետ Ռաևսկու վրանում, բայց հայտնի է, որ նրա մեկնելուց հետո, 1829 թ. վերջին Ռաև-սկին ձերբակալվում է աքսորյալ դեկաբրիստների հետ «դատապարտելի հա-րաբերություններ» ունենալու մեղադրանքով և նրա դեմ դատական գործ է հարուցվում, որի հետևանքով նա հետ է կանչվում Կովկասյան կորպուսից։ Ըստ երևույթին այդ գրույցների շնորհիվ Պուշկինը քաջատեղյակ էր ռազ-մական իրադարձություններին և դա հնարավորություն տվեց նրան ճշմար-տացիորեն պատմել աքսորված դեկաբրիստների սխրագործությունները, ռու-

⁴⁵ «Русский архив», 1886, № 12, էջ 253։

⁴⁶ Ա. Ս. Պ ո շ կ ի ն, Երկեր, հատ. 5, էջ 47։

սական բանակի ձեռք բերած հաղթանակներում նրանց ունեցած հսկայական դերի մասին:

Գործող բանակում բանաստեղծի անցկացրած օրերի մասին հետաքրքրալից հիշողություններ ունի Ն. Ն. Ռաևսկու աղյուստանտ Մ. Ֆ. Յուզեֆովիչը. «Պուշկինն ուներ ճանապարհորդական մի ճամպուրակ, որի ցածի մասը լի էր թղթերով: Երբ խոսք բացվեց դեռևս լույս չընծայված «Բորիս Գոգոլ-նովն» ու «Օնեգինի» վերջին մասը մեզ համար ընթերցելու մասին, նա ճամպուրակը տվեց իր և եղբորը և ինձ, որպեսզի մենք ինքներս գտնենք այն, ինչ ուզում ենք: Մենք գտանք այնտեղ «Բորիս Գոգոլնովը» պարունակող տետրը և հատվածներ «Օնեգինից»՝ առանձին թերթիկների վրա: Բայց հասկանալի է, որ մենք դրանով չբավարարվեցինք, այլ ամբողջը քրքրեցինք և գտանք, ի միջի այլոց, «Կովկասի դերու» հիանալի, մաքուր, խնամադիր: Երբ ես ցույց տվի այն Պուշկինին, ասելով, թե դա զանձ է, նա, ծիծաղելով, ձեռագիրը նվիրեց ինձ: Բայց Ռաևսկին, խնդրելով ինձնից նայելու համար, հայտարարեց, թե քանի որ պոեմը ձեռնված է իրեն, ապա մաքուր խնամադիրը նույնպես պատկանելու է իրեն, և Պուշկինն իրավունք չունի այն ուրիշին նրվիրելու: Դժվար չէ պատկերացնել իմ վրդովմունքը: Ես նետվեցի Ռաևսկու վրա այն խլելու, բայց ստիպված եղա զիջել նրա ահարկու ուժին: Հետագայում, ազնիվ խոսք առնելով, որ կվերագրեմ, Ռաևսկին ձեռագիրը տվեց ինձ, որպեսզի արտագրեմ տպագրության մեջ բաց թողնված մասերը»⁴⁷:

Հունիսի 26-ին ռուսական բանակը մոտենում է էրզրումին և հաջորդ օրը, կոտրելով թուրքական կայապարի դիմադրությունը, գրավում բերդը:

«Ռաևսկին դնաց քաղաք. ես էլ գնացի նրա հետ: Մենք մտանք քաղաքը, որը զարմանալի տեսարան էր ներկայացնում: Թուրքերն իրենց տափակ կտուրներից մոռյլ նայում էին մեզ վրա: Հայերն աղմկելով վխտում էին նեղ փողոցներում: Նրանց տղաները վազում էին մեր ձիերի առջևից, խաշակներով ու կրկներով. «Քրիստիա՛ն, Քրիստիա՛ն...»: Մենք մոտեցանք բերդին, ուր մուտք էր գործում մեր հրետանին: Մեծ զարմանքով ես այստեղ հանդիպեցի իմ Արտեմին, որն արդեն շրջադայում էր քաղաքում, շնայած խիստ հրամանին, որ ոչ ոք ճամբարից չբացակայի առանց հատուկ թույլտվության»⁴⁸:

Պուշկինը մշտապես ընդգծում է, որ հայերը խիստ բարեկամաբար էին տրամադրված ռուսների հանդեպ. դա բացատրվում էր ոչ միայն թուրքական լծից ազատագրվելու համար երախտագիտության զգացումով, այլև տեղական բնակչության նկատմամբ ռուս զինվորների վերաբերմունքով: Էրզրումը գրավված էր 10000-անոց զորքով, բայց «ոչ մի բնակիչ ոչ մի անգամ չէր զանգատվել զինվորի բռնության մասին»⁴⁹:

Հասկանալի պատճառներով «Ճանապարհորդության...» մեջ չեն հիշատակվում դեկաբրիստների հետ ունեցած բոլոր հանդիպումները, բայց, ասես թե ի միջի այլոց, բերվում են նորանոր անուններ: Այսպես, Պուշկինը գրում է պատմաբան և լրագրող Վ. Դ. Սուխորուկովի հետ ունեցած հանդիպումների մասին: Վերջինս Ֆ. Գլինկայի, Վ. Կյուխելրեկերի, Կ. Ռիլենի բա-

⁴⁷ «Русский архив», 1880, № 3, էջ 441—442:

⁴⁸ Ա. Ս. Պուշկին, Երկեր, հատ. 5, էջ 52:

⁴⁹ Նույն տեղում, էջ 57:

ՊՈՒՇԿԻՆԻ ՃԱՆԱՊԱՐՅՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ
ԴԵՊՈՒ ԵՐՁԵՐՈՒՄ
ПУТЕШЕСТВИЕ ПУШКИНА
В ЭРЗЕРУМ

ԿԱԶՄ. ՍՏ.ԼԻՍԻՑԿԱՆ 1829
сост. Ст. Лисицкий



րեկամն էր և կապ ուներ «գաղտնի կազմակերպությունների» մասին գործի հետ, որի համար արքային տրված էր Կովկաս, գործող բանակ։ Այստեղ, Պասկևիչի հանձնարարությամբ, նա շարադրում է 1828 և 1829 թթ. պատերազմների նկարագրությունը։ «Երեկոները ես անց էի կացնում խելոք և սիրալիր Սուխորուկովի հետ. մեր զբաղմունքների նմանությունը մեզ մոտեցնում էր։ Նա ինձ պատմում էր իր զրական մտադրությունների մասին, իր պատմական հետախուզումների մասին, որ մի ժամանակ նա սկսել էր այնպիսի եռանդով ու հաջողությամբ։ Նրա իղձերի և պահանջների չափավորությունը իսկապես որ սրտաշարժ է։ Ափսոս կլինի, եթե նրանք չկատարվեն»⁵⁰։

Կարծես թե պատահականորեն հիշվում է Կոնովնիցինի անունը։ Նա հյուսիսային ընկերության անդամ էր, Սենատի հրապարակում ապստամբության մասնակից, պաշտոնազուրկ էր արված և որպես շարքային ուղարկված Կովկաս. մասնակցել էր երկու պատերազմներին էլ և ցուցաբերել արիության և խիզախության փայլուն օրինակներ։

«Վերադառնալով ապարանքը, պահակ կանգնած Կոնովնիցինից իմացա, որ Արզրումում ժանտախտ է երևացել»։ Բայց հենց միայն այն, որ Պուշկինը հանդիպել և ինչ-որ բանի մասին զրուցել է Կոնովնիցինի հետ, շատ բան էր ասում «Ճանապարհորդության...» ընթերցողներին։

Կասկածից վեր է, որ գործող բանակում լինելով, բանաստեղծը ոչ միայն շփվում էր ղեկաբրիստների հետ, այլև աշխատում էր ինչ-որ բանով թեթևացնել նրանց վիճակը։ Այս մասին հետաքրքիր վկայություն ունի Մ. Ֆ. Յուզեֆովիչը. «Նա չափազանց բարի և սիրալիր էր։ Պետք էր տեսնել այն քնքուշ կարեկցանքը, որով նա վերաբերվում էր Սուխորուկովին, այդ խելոք, կրթված և չափազանց համեստ իր զրչակցին, որը դժբախտություն էր ունեցել իր դեմ գրգռել այն ժամանակվա ռազմական մինիստր Չերնիշովին... Չհաշված այլ հալածանքները, նրանից վերցրել էին Դոնի պատմությանը վերաբերող բոլոր այն նյութերը, որ նա դուրս էր գրել Կարամզինի հանձնարարությամբ արխիվներում պրպտումներ կատարելիս։ Իմանալով այդ մասին, Պուշկինը գրեթե լաց էր լինում և անընդհատ մտածում էր, թե ինչ եղանակով, Պետերբուրգ վերադառնալուց հետո, այդ փաստաթղթերը վերադարձնել տա Սուխորուկովին»⁵¹։

Էրզրումում Պուշկինը մնում է երեք շաբաթ։ Հրաժեշտի ժամանակ Պասկևիչը նրան մի թուրքական թուր է նվիրում։ «Ես այն պահում եմ որպես հիշատակ փայլուն հերոսի հետքով Հայաստանի նվաճված անապատներում կատարած իմ թափառումների։ Նույն օրը ես թողի Արզրումը»⁵²։ Ու թեև Պասկևիչին Պուշկինը որակում է այսպիսի էպիտետով, սակայն Կովկասյան հատուկ կորպուսի գլխավոր հրամանատարի թե՛ անձին, թե՛ գործունեությանը «Ճանապարհորդության...» մեջ տրված իրական գնահատականը բացասական էր⁵³։ Հուլիսի 21-ին Պուշկինը թողնում է Էրզրումը և ուղևորվում

⁵⁰ Նույն տեղում, էջ 56։

⁵¹ «Русский архив», 1880, № 3, էջ 435։

⁵² Ս. Ս. Պուշկին, Երկեր, հատ. 5, էջ 60։

⁵³ Այդ մասին տե՛ս Ю. Тынянов, О «Путешествии в Арзрум» («Пушкин. Временник Пушкинской комиссии», кн. 2, Л., 1936)։ Տեղեկություններ կան, որ Պուշկինի անհապաղ մեկնումը պահանջել էր Պասկևիչը՝ արքային տրված ղեկաբրիստների հետ նրա ունեցած հանդիպումների պատճառով (տե՛ս Е. Г. Венденбаум, Кавказские этюды, Тифлис, 1901, էջ 253)։

Թիֆլիս: «Ես հետ էի վերադառնում Թիֆլիս արդեն ինձ ծանոթ ճանապարհով. ինչ վայրերը, որ դեռ նորերս կենդանացած էին տասնհինգհարանոց զորքի ներկայությամբ, լուռ էին և տրտում: Ես անցա Սողանլուղը և հազիվ կարողացա ճանաչել այն տեղը, ուր կանգնած էր ճամբարը: Գումրիում ես երեքօրյա կարանտին պահեցի: Նորից տեսա Բզովղալը և սառը Հայաստանի բարձր դաշտավայրերը թողի տոթակեզ վրաստանը մտնելու համար»⁵⁴:

Օգոստոսի 1-ին Պուշկինը հասնում է Թիֆլիս և վեց օրից հետո մեկնում Վլադիկավկազ, այնտեղից էլ՝ Ռուսաստան:

Այս ուղևորության շնորհիվ բանաստեղծը կարողանում է տալ սլատերազմի պատմականորեն ճշմարտացի պատկերը, ցույց տալ նրա իսկական հերոսներին՝ աքսորյալ ղեկաբրիստներին, արժանին հատուցել ոչ միայն ռուսական բանակի, այլև տեղական բնակչության՝ հայերի, վրացիների, ադրբեջանցիների հերոսական գործողություններին: Պուշկինը կարողացավ հասկանալ անդրկովկասյան ժողովուրդների վերաբերմունքը դեպի ռուսները, կարողացավ տալ կարևորագույն պատմական իրադարձության՝ Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միացնելու օբյեկտիվ գնահատականը:

Ուղևորությունը Կովկաս, Հայաստան, ուր արդեն մի քանի տարի արիաբար կռվում էր ռուսական բանակը, մտնում էր բանաստեղծի ստեղծագործական հետաքրքրությունների ընդհանուր ծրագրի մեջ: Լինելով մեծ հայրենասեր, նա միաժամանակ իր երկրի բոլոր ժողովուրդների բարեկամն էր:

ПУШКИН В АРМЕНИИ

(К 175-летию со дня рождения)

К. В. АЙВАЗЯН

(Резюме)

Одним из примечательных эпизодов биографии А. С. Пушкина является его поездка в 1829 г. в Закавказье и пребывание в июне-июле того же года на территории Армении, где тогда происходила русско-турецкая война. Об этом он рассказал в изданном им в 1836 г. очерке «Путешествие в Арзрум», написанном им на основании записей в путевом журнале в 1824 году.

Причинами, побудившими поэта вопреки запрету Николая I отправиться в действующую русскую армию, было желание увидеться с сосланными друзьями-декабристами, интерес к закончившейся войне с Персией (1826—1828), в результате которой Восточная Армения была присоединена к России, а также к событиям войны с Турцией (1828—1829).

Выехав из Москвы 1 мая 1829 г., Пушкин 26 мая прибыл в Тифлис. Здесь он остался около двух недель, затем, 10 июня, направился в Карс, где тогда находилась русская армия. Проехав через Бзовдальский перевал, село Гергеры, Пернике, он 11 июня прибыл в Гумри, где остался на ночь, 12-го Пушкин был в Карсе, а спустя день, 13 июня, на берегу реки Карс-чай нагнал русскую армию и с ней совершил поход до Арзрума.

⁵⁴ Ա. Ս. Պուշկին, Երկեր, հատ. 5, էջ 60:

Здесь он общался с многими из ссыльных декабристов и лицами, причастными к делу о «тайных обществах» — Н. Н. Раевским, И. Г. Бурцовым, В. Д. Вольховским, М. И. Пушиным, Н. Н. Семичевым, В. Д. Сухоруковым и др., лично участвовал в ряде сражений с турками. Пробыв три недели в Арзруме, Пушкин 21 июля выехал в обратный путь. Из-за чумы ему пришлось выдержать трехдневный карантин в Гумрах. 1 августа он прибыл в Тифлис, оттуда, через 6 дней — во Владикавказ.

В своем «Путешествии в Арзрум» Пушкин в нарочито спокойном, эпическом тоне описал то, что замалчивалось официальной печатью: о героизме ссыльных декабристов, их огромной роли в победах русской армии; вместе с тем он показал и других героев войны — армян, грузин, азербайджанцев, их активное участие в боевых операциях, радость местного армянского населения в связи с освобождением от персидских ханов и турецких пашей.